



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ Հ.Ս.Ը.Ը.Ի ՆՈՐԾՆՏԻՐ ԾՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԱՄՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքաբթի, 7 Դեկտեմբերի Երեկոյեան ընդունեց այցելութիւնը Հ.Ս.Ը.Ը.Ի նորընտիր Ծրչանային Վարչութեան, գլխաւորութեամբ ատենապետին՝ Տիար Գառնիկ Աբրահամեանի: Յանդիպումին ներկայ Եղան Ազգային Վարչութեան ատենապետը՝ Տիկին Շիմա Պողոսեան եւ անդամներ՝ Տեարք ճորժ Զօրպաճեան, Թորոս Քէչենեան, Խաչիկ Երեցեան եւ Կարեն Բենիասեանս:

Կազմերու փոխադարձ ծանօթացումեն ետք, Առաջնորդ Սրբազնան ու Ազգ. Վարչութեան ատենապետուիին արտասանեցին ողջոյնի խօսքեր: Անոնք շնորհաւորեցին ընտրեալ ծառայողները եւ վեր առին Հ.Ս.Ը.Ը.Ի սերնդակերտ ու պատանիներն ու երիտասարդները առողջ մթնոլորտի մէջ համախմբելու այս միութեան յատկանիշները:

Հ.Ս.Ը.Ը.Ի ներկայացուցիչները հակիրճ տեղեկութիւններ տուին Հ.Ս.Ը.Ը.Ի. շրջանային ժողովին ու անոր յաջորդած կազմակերպական աշխատանքներուն, ապա նաեւ յառաջիկայ ծրագիրներուն մասին: Անոնք նշեցին, թէ Վարչութիւնը կը քննարկէ տարբեր մարզերուն մէջ յաւելեալ բարելաւում ծեռք բերելու եւ երիտասարդութիւնը աւելի եւս ներգրաւելու միջոցները: Յատուկ կարեւորութեամբ վեր առնուեցաւ Ազգ. Առաջնորդարանին հետ Հ.Ս.Ը.Ը.Ի դաստիարակչական ծրագիրները՝ սկաուտական »Ս. Մեսրոպ Մաշտոց« շքանշանին գծով աշխատանքները աւելի եւս ընդարձակելու կարելիութիւնները:

Առաջնորդ Սրբազնանը բարձր գնահատեց Հ.Ս.Ը.Ը.Ի ու անոր անձնուեր ծառայողներուն գործունեութիւնը եւ յաջողութիւն մաղթեց նոր կազմին, իր յանձն առած պատասխանատուութիւններուն կենսագործման մէջ: Ան նաեւ յուշանուերներ յանձնեց հիւր վարչականներուն:

## HOMENETMEN NEW REGIONAL EXECUTIVE VISITS THE PRELACY

On Tuesday, December 7<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy members of the Homenetmen

new Regional Executive, headed by Chairman Mr. Garnik Abrahamian. Executive Council Chair Mrs. Rima Boghossian and members Mr. George Chorbajian, Mr. Toros Kejejian, Mr. Khatchig Yeretzian, and Mr. Kahren Beniasians participated in the meeting.

Following the introductions, the Prelate and Mrs. Boghossian welcomed the guests, congratulating them on their election and commending the mission of Homenetmen.

The Homenetmen representatives conveyed information about their upcoming endeavors and projects they are planning, noting that special attention is being given to the Navasartian Games, to having the youth more involved in community life, and to expanding the St. Mesrob Mashdots program which is a collaborative effort between the Prelacy and Homenetmen.

The Prelate again commended the dedication of the members to fulfilling the mission of Homenetmen, and wished them success in their future endeavors. The meeting concluded with the presentation of mementos by the Prelate.